ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ԵՎ ՀՀ ԳԱԱ «ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Թանգարան) և ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Ինստիտուտ), միասին անվանվելով Կողմեր, ձգտելով ընդլայնել և ամրապնդել Կողմերի համագործակցությունը, ղեկավարվելով այն գիտակցմամբ, որ մշակութային ժառանգության պահպանման և հետազոտման ոլորտում տեղեկույթի և փորձի փոխանակումը բխում է Կողմերի շահերից և հիմք ընդունելով Կողմերի՝ մշակութային ժառանգության և պատմության մասին բազմաբնույթ գիտելիքների փոխանակման անհրաժեշտությունը, համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը պայմանավորվում են սույն Փոխըմբռնման Հուշագրին համապատասխան՝ համագործակցություն իրականացնել իրենց լիազորությունների շրջանակներում:

Սույն Փոխըմբռնման Հուշագրի դրույթների կատարման և կազմակերպման համար պատասխանատու են՝

- Թանգարանի կողմից՝ թանգարանի տնօրենը,
- Ինստիտուտի կողմից՝ ինստիտուտի տնօրենը:

Վերոհիշյալ պատասխանատուները միմյանց միջև կհաստատեն մշտական կապ և կձեռնարկեն միջոցներ՝ սույն Փոխըմբռնման Հուշագրի արդյունավետ կատարումը ապահովելու նպատակով:

Սույն Փոխըմբռնման Հուշագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում կողմերը միմյանց կփոխանցեն սույն հոդվածով նախատեսված պատասխանատու

ստորաբաժանումների իրավասու պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև՝ ողջամիտ ժամկետում միմյանց կտրամադրեն նշված տեղեկատվությանն առնչվող փոփոխությունները:

Հոդված 2

Սույն Փոխըմբռնման Հուշագրի շրջանակներում Կողմերի համագործակցությունը կներառի հետևյալ ուղղությունները.

1. Գիտական տեղեկատվության և հրատարակությունների փոխանակում,
2. Փորձագիտական հանդիպումներ և խորհրդակցություններ,
3. Գիտաժողովների, սեմինարների, դասընթացների և այլ միջոցառումների համատեղ անցկացում,
4. Համատեղ ցուցահանդեսների կազմակերպում,
5. Համատեղ հետազոտական նախագծերի իրականացում և հրատարակությունների պատրաստում:

Հոդված 3

Համագործակցության շրջանակներում իրականացվող առանձին նախագծերի, միոցառումների իրականացման նպատակով՝ Կողմերը կստեղծեն համատեղ աշխատանքային խմբեր, որոնց աշխատանքային ծրագիրը և պայմանագրային հարաբերությունները լրացուցիչ կսահմանվի:

Հոդված 4

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով: Արձանագրություններն ուժի մեջ են մտնում ստորագրման պահից և կազմում են սույն Հուշագրի անբաժանելի մասը:

Հոդված 5

1. Սույն Փոխըմբռնման Հուշագիրը կողմերի համար ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և վավերական է անորոշ ժամկետով:
2. Սույն Փոխըմբռնման Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից մեկի՝ մտադրության մասին մյուս Կողմին գրավոր ծանուցելու օրվանից 10 օր հետո:
3. Փոխըմբռնման Հուշագիրը ստորագրվել է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ	ՀՀ ԳԱԱ «ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,	Հայաստանի Հանրապետություն, Երևան
Հանրապետության հրապարակ 4	0019 Մարշալ Բաղրամյան 24/4,
Հեռախոս՝ +374 11 547363	Հեռախոս՝ +374 10 583382
էլ. փոստ՝ d.poghosyan@historymuseum.am	էլ. փոստ՝ info@orient.sci.am
Տնօրեն Դավիթ Պողոսյան	Տնօրեն Ռոբերտ Ղազարյան
Կ.Տ.	Կ.Տ.
մարտի 2021 թ.	մարտի 2021 թ.